



ՌՈՒԲԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ

ԾՆՆԴԵԱՆ ՏՈՆԵՐԸ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

5 հունվարի, Երկուշաբթի

«ՋՐԱԳԱՆՈՑ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Ետեհուրդ մեծ և սխալելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ, Հովիւմն երգեն ընդ հրեշտակս, տան անտիս աշխարհի...»:

ՇԱՐԱԿԱՆ



րեկո է, Ծննդյան ճրագալուցցի ձմեռային խաղաղիկ ու հաճելի երեկոներից մեկը:

Մայր Տաճարում սկսվել է երեկոյան ժամերգությունը: Ժողովրդի հոծ զանգվածները ամեն կողմից լցվել են էջմիածին: Հայ ուխտավորը, ծանր ու բարակ, ճամբա ընկնելով հեռուներից, նորից էջմիածնումն է: Դարերով սրբագործված հայ ժողովրդի այս նվիրական սրբություն սրբոցը անդիմադրելիորեն քաշում բերում է իր դավաններին իր նվիրական գիրկը:

Տաճարի ներսում շարժվելու հնարավորություն չկա: Մոմերի լույսով լուսավորված տաճարը իր հնադարյան, խնկից սևացած նկարազարդ կամարներով մի ամբողջ խորհրդավորություն է ներկայացնում այդ պահին: Հարյուրավոր լուռ ու խոհուն, աղոթանքներ հայացքներ դարձել են դեպի քահանայից դասը, իսկ այստեղ, առյուծան, ամբողջ միաբանությունը ծնկի է եկել և աղոթում է: Լսվում են երեկոյան «Համբարձի» շարականի տխուր ու մեղամաղձիկ հնչյունները: Վհատ ու միստիկ այդ հնչյունները գալիս են կարծես դարերի վշտի խորքից: Երգի ելեէջները հանդարտիկ սահում են, փարվում վանքի կամարներին:

Մի փոքր անց կարդացվում են Հին Կտակարանի մարգարեություններից, առականներից: Ավագ սեղանի վարագույրը փակ է, առջևում երեք շքեղ ջահեր պայծառորեն լուսավորում են:

Վարագույրի հետևից կամացույց դուրս են գալիս երեք հոգի, ձեռքներին մոմեր և ընթերցվածի թղթեր բռնած: Սկսում է ժողովրդից անշափ սիրված Դանիելի գրքի ընթերցվածը: Երբ արտասանվում են վերջին «օրհնեցէք»-ները, լսվում է դպիրների մեղմալուր ձայնը՝ «օրհնեցէք, գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան»: Տաճարի ներսում այնքան հուժկու, խրոխտ ու զորեղ են խփում զանգերը, այնքան տոնական ու զվարթ են հնչյունները, որ մի րոպե առաջ հոգիդ պարուրած միստիկ ապրումները խլույցն տեղի են տալիս հոգեպարար ցնծության: Օղբ լի է ուրախության աղմուկով: Հայ եկեղեցին դարերից ի վեր վեհություն ու ապրում է զրեւ իր ժամերգության յուրաքանչյուր պահի մեջ:

Բացվում է վարագույրը, լսվում է սարկավագի ձայնը՝ «Օրհնեա՛, Տէ՛ր», երգում է դպիրների երգեցիկ քառաձայն խումբը, սկսվում է Ծննդյան ճրագալուցցի հանդիսավոր սուրբ պատարագը:

Ամեն կողմերից լուսավորված սուրբ սեղանը ճառագայթների բյուրավոր, լուսավոր խրճեր է թափում իր շուրջը: Այսօր ամեն ինչ տոնական է ու պայծառ, ամեն խոսք ու իմաստ նվիրված է Փրկչի Ս. Ծննդյան տոնին:

Սուրբ պատարագը արձակվում է, որից հետո սկսվում է նախատոնակը. «Ետեհուրդ մեծ և սխալելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ...»:

Կամարները թնդում են ձայնի հորձանք-ներին, ալիք առ ալիք տարածվում է երգը՝ «Մնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի...»:

Այո՛, այս նվիրական գիշերին, մի անգամ ևս ծնվեց աշխարհի Փրկիչ մանուկ Հիսուսը: Թո՛ղ ծնվի նա վերստին մեր բոլորի հոգի-ներում, թո՛ղ նրա խաղաղարար հոգին զո-

վացնե ծարաված հոգիները: Եվ այս ա-ղոթանվեր ու սրբազան պահին, թո՛ղ յու-րաքանչյուրը հարց տա յուրովի, թե կարո՞ղ է, պատրա՞ստ է արդյոք ընդունել իր հո-ղում՝ նոր ծնված Հիսուսին: Չլինի թե ան-պատրաստ գտնվենք և անմասն մնանք նրա անձառելի ծննդից:

6 հունվարի, երեքշաբթի

«ՏՈՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ, Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ: Կամէ՛ր մկրտիլ ի ծառայէն իւրմէ...»:

ՏԱՂԱՐԱՆ



ուսվողական մեզի մեջ բացվում է աղոթարանը: Կսվում է Ս. Տաճարի ազդարար կոչնակը, աղոթողները շտապում են հաս-նելու առավոտյան ժամերգության: Տաճարի ներսում կիսախավար է, նեղ լուսամուտնե-րից կամաց-կամաց ներս է թափանցում վա-ղորդյան աղջամուղջը, կաթոլիկների գլխա-պտույտ բարձրությունը դեռ սքողված է խորհրդավոր մթնոլթյամբ, և այդ կիսամութի մեջ լսվում են սաղմոսի միօրինակ մրմունջ-ները: «Կեօյի՛» արա ինձ առաւօտու զոդու-մութիւնս քո, զի ես ի Քեզ, Տէ՛ր, յուսացայ:»

Ուրախ ու խորիմ է հնչում «Ջարթի՛ք, փառք իմ»-ը: Վանքի միաբանությունը զգես-տավորված և տոնական հանդիսավորության մեջ է:

Այսօր նույնպես շարունակվում է երեկ երեկոյան հանդիսակատարությունը. բոլոր կարդացվող գրքերը, ավետարանները, քա-րոզները իրենց բնաբան ու բովանդակու-թյուն ունեն Բրիստոսի հրաշալի ծնունդը: Մի քանի անգամ երգվում է «Խորհուրդ մե-ծ»-ը: Բավական ուշ վերջանում է առավոտ-յան ժամերգությունը:

«Այսօր՝ տօն է Ս. Մենդեան, ձեզ և մեզ մեծ աւետիս» — ամենուրեք շնորհավորում են իրար, ողջագոլովում:



Հայ եկեղեցին, հավատարիմ իր առաքե-լավանդ հին սովորույթին, Բրիստոսի Մերնդ-յան տոնակատարության օրը կատարում է նաև Փրկչի Մկրտության տոնը՝ «Ջրօրհ-նեաց հանդէսը»:

Տաճարում սկսվել է սուրբ պատարագը: Դրպում պայծառ օր է: Բնությունն էլ կար-ծես ուրախ է օրվա հանդիսավորության հա-մեմատ:

Տաճարի բազմաթիվ կամարակալ լուսա-մուտներից ներս թափանցած արեգակի կեն-սատու շողերը շեղակի հատում են իրար և լույսի, ուրախության ցնցողներ կազմում: Ամբողջ Տաճարը լսողություն է դարձել, խունկ ու աղոթք է ծորում երգի հնչյուններից, պատարագիչը ոտաբորեկ, գլխաբաց, ձեռ-քերը տարածած աղոթում է, կարծես այդ վեհ վայրկյանին նա ներկայացնում է տա-ռապած Քրիստոսին, իր տառապած հոտի համար աղոթելիս:

Պատարագը մոտենում է իր ավարտին: Պատարագիչ եպիսկոպոսը հավուր պատշա-ճի քարոզում է:

Այժմ սկսում է «Ջրօրհնեաց հանդէսը»: Սեղանի առջևում դրված է ջրով լի մեծ, գե-ղեցիկ մարմարյա կոնքը: Սարկավազները սաղմոս են քաղում, դպիրները երգում են, կարդում են մարգարեությունները և ավե-տարանները: Բուրվառի համաշափ շարժում-ների հետ այդ բոլորը կազմում են մի գեղե-ցիկ ներդաշնակություն. այստեղ չկա մի ա-վելուրդ խոսք, մի ավելուրդ իմաստ:

Եպիսկոպոսը արդեն ընթերցում է Ս. Բար-սեղի հայտնի աղոթքը և քարոզից հետո եր-գում են «Ո՛վ զարմանալի» տաղը: Հրաշալի է այս ներգը, այնքան տիպական ու մատչե-լի, որ նրա վեհասքանչ հնչյունների մեջ լսում ես Հորդանան գետի վարարուն կո-հակների ձայնը:

«Յորդանան լուեալ փախստական
դառնալը,
Վըտակ առ վըտակ պատգամատը՝
լինէր...»:

Եվ այս հրաշքը, անմասն հրաշքը.
«Գե՛տ, մի՛ դարհուրիր, քո արարիչն
եմ ես,
եկեալ մկրտիմ և լուսնամ զմեզս...»:

Եպիսկոպոսը նկարազարդ մեծ խաչը ջուրն է գցում և «Այսօր ձայնն հայրական» տաղի հնչյունները դուրս են պոռթկում մի անդամից: Դա երգ չէ, դա մի աննման ցնծության ափսոսիք է, ուրախության մեծ առհաստիք: Աստվածորդին անօրինակ խոնարհությամբ իջնում է Հորդանան՝ մկրտվելու մեծ կարապետից: Մարգկության մեծ Փրկիչը պատրաստվում է իր ապագա գործունեության համար:

Եպիսկոպոսը ձեռք է վերցրել մյուսոնաթափ աղավնին և արդեն տշառնադրում է ջուրը. «Օրհնեսցի և սրբեսցի ջուրս, այս նշանաւ...»:

«Առաքելոյ աղանոյ» շարականի երգակ-

ցությամբ սուրբ մյուսոնի ոսկեփայլ կաթիլները ցուցում են մի վայրկյան օդում և թափվում ջրի մեջ, և ամեն մի կաթիլի հետ հավատացյալների հոգուց կարծես ուրախության թուփանքներ են դուրս թռչում:

Սուրհրդավոր այս արարողություններով Հայ եկեղեցին կենդանի պատկերով հավատացյալների սրտերում քանդակում է այն, ինչ հանդիսանում է օրվա դադափարն ու էությունը:

Վերջին աղոթքներն են, «Հայր մեր» և ալարտ հանդիսի:

Տաճարում բազմությունը հորձանք է տալիս:

«Շնորհավոր Մեռնդ և Մկրտություն»:

